

ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՑԵՑԱԲ Ս. ԱՐԱՐԻՈՅ ԳԱՅԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԻՆ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի Ուրբաթ օր Ռիատի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Միւնխենի Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Պըն Ապտէլ Ալիյի հետ: Քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւնները, շրջանային իրավիճակն ու արաբական խորհրդածոյի կապուած հարցերը:

Հարիրի մտիկ աղբիւրներ լրատու միջոցներու յայտնեցին, որ Ապտալա իշխանը հանդիպումին ընթացքին հաւաստած է, որ ներկայ պիտի գտնուի վեհաժողովին:

Հարիրի Շաբաթ օր Ռիատէն մեկնեցաւ Փարիզ, ուր երէկ գիշեր տեսակցեցաւ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի հետ:

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՈՒՎՇԻՆԿԹԵՆ ԱՒԵԼԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԸ ՎՍՏԱՀԻ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ կը հաւատայ, որ եւրոպական բոլոր երկիրները, որոնց կարգին է Բրիտանիա, չեն ուզեր Իրաքի դէմ ամերիկեան նոր յարձակում մը, որ լուրջ ու վտանգաւոր հետեւանք պիտի ունենայ շրջանային կայունութեան վրայ:

Իտալական «Քորիերէ Տելլա Սերա» օրաթերթին կողմէ հրապարակուած հարցազրոյցի մը մէջ, Ասատ ըսաւ, թէ արաբական երկիրները Միացեալ Նահանգներէն աւելի եւրոպական Միութեան վրայ վստահութիւն ունին, որ արդար մօտեցում մը պիտի որդեգրէ Միջին Արեւելքի հարցերուն հանդէպ: «Իրաքի վրայ յարձակում մը պիտի ըլլայ յարձակում մը արդարութեան եւ մարդկային իրաւունքներու վրայ», աւելցուց Ասատ: Ան դիտել տուաւ նաեւ, որ արաբական ու իսլամական բոլոր երկիրները առանց բացառութեան դէմ են Կիւնուրական գործողութեան մը: Ասատ շեշտեց, որ մասնաւորապէս մը արտայայտած են նաեւ եւրոպացի բոլոր պատուիրակները, որոնց հետ հանդիպում ունեցած է: Սուրիացի նախագահը շեշտեց յատկապէս բրիտանացի պատուիրակին պարագան, նկատի ունենալով, որ Բրիտանիա Միացեալ Նահանգներուն գլխաւոր դաշնակիցն է: «Ամերիկա պէտք է պզուշ ըլլայ, որովհետեւ Իրաքի դէմ յարձակում մը չափազանց վտանգաւոր պիտի ըլլայ, որովհետեւ անիկա պիտի դիմագրաւէ քաղաքական բարկութիւններն աւելի պարտաւոր ու աւելի վտանգաւոր նկատող ժողովրդային ցասումը», աւելցուց Ասատ:

Ասատ հերքեց նաեւ այն ամբաստանութիւնները, ըստ որոնց, Սուրիա ՄԱԿի պատժամիջոցները կը խախտէ՝ օրական հարիւր հազար տակտ քարիւղ ներածելով Իրաքէն: Ասատ շեշտեց, որ որեւէ խախտում տեղի չ'է ունեցած, եւ թէ Սուրիա պարզապէս անցեալ տարի փորձարկած է քարիւղատար խողովակը, որ հինէն Իրաքէն Սուրիա կու գայ: Ան աւելցուց, որ Սուրիա կը ծրագրէ աւելի մեծ խողովակ մը կառուցել՝ միշտ յարգելով ՄԱԿի որոշումները:

Ասատ կը խօսէր Իտալիա կատարելիք այցելութենէն երկու օր առաջ: Խօսելով պաղեստինեւիստայեան տագնապին մասին, Ասատ Շաբաթ՝ էջ 3

ԱՆՀԱՆԳՍՈՒԹԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԷԿ ՇԱՐԱԹ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵՄԵՆ ՀԵՌՈՒ ՄՆԱԼԷ ԵՏՔ

ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ԳՈՐԾԻ ԼԾՈՒԵՑԱԲ ԵՒ ԸՐԱՇԱՆԳԵՑ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ ՌԱԲԱԿՈՇԵԼ

Հրէական բնակեցման վայրի մը մէջ պաղեստինեան անձնասպանական գործողութեան մը դէմ Իսրայէլի հակադարձութիւնը եղաւ խիստ, երբ անիկա ծանր ու մարակոծումի ենթարկեց այսօր յորդանանեան քաղաքները:

Անհանգստութեան պատճառով մէկ շաբաթ հրապարակէ հեռու մնացած Արիէլ Շարոն գործի վերսկսուած երէկ՝ Այսր-յորդանանի ու մարակոծումի մը հրահանգելով: Շարոն անմիջապէս հանդիպում ունեցաւ ապահովութեան հարցերու նախարարներուն հետ, քննարկելու համար կացուած թիւնը եւ յարմար միջոցառումները որդեգրելու: Հանդիպումին աւարտին Շարոն վերջտար յայտարարեց, որ Իսրայէլ յաղթական դուրս պիտի գայ պատերազմէն: Պաղեստինեան անձ-



Պաղեստինցի ոստիկան մը կը ընցէ քանդուած գրասենեակ մը:

նասպանական վերջին գործողութիւնը կատարուեցաւ Շաբաթ օր, Այսրյորդանանի «Քարնէլ Շոմրոն» բնակեցման

վայրի մէջ: Պաղեստինցի մը, որ մարմինին վրայ ականներ ու գամեր գետեղած էր, ինքզինք պայթեցուց բնակեցման վայրին մէջ փիցերիային մէջ, ուր իրեն կողքին երկու խորայնաքիներ սպանվեցին: Շաբաթ՝ էջ 3

ՔԻՒՐՏ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ ՕՃԱԼԱՆԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Ֆրանսայէն եւ Գերմանիայէն շուրջ 6 հազար քիւրտեր Շաբաթ օր հաւաքի մը մասնակցած են Սթրասբուրգի մէջ (Ֆրանսա), որ մարդկային իրաւանց եւրոպական ատենին կեդրոնն է՝ քիւրտ անջատողական ղեկավար Ապտալա Օճալանի ազատ արձակումը պահանջելով:

Յոյցը կը գուցազիպէր Թուրքիոյ կողմէ Օճալանի ձերբակալութեան երրորդ տարեդարձին:

Մարդկային իրաւանց ատենը այս տարի վճիռ պիտի արձակէ Օճալանի հետեւորդներուն մէկ կողին զծով՝ Թուրքիոյ արձակած մահափճիւր բեկանեղու համար:

Օճալան ՔԱԿի գինեակներուն հրահանգած է քաշել Թուրքիայէն: Թրքական բանակին համաձայն, շուրջ 5000 ըմբոստներ ներկայիս ապաստանած են Հիւսիսային Իրաքի եւ Իրանի լեռները:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՖՐԱՆՍԱ ՀՐԱԺԵԾՏ ՏՈՒՄԻ 641 ՏԱՐՈՒՄՆ ԴՐԱՄԱՆԻԾԻՆ՝ ՖՐԱՆՔԻՆ

ՓՐԻԹ, 17 (ՌՈՅԹԸՐԸ).- Ֆրանսա առանց մեծ յուզումներու հրաժեշտ տուաւ Կիրակի օր իր 641 տարուան դրամանիշին՝ Ֆրանքին, որ լետ այսու պիտի փոխարինուի եւրոյով:

Աշակողմեան արեւելումով «Լը Ֆիկար» օրաթերթին համաձայն. «Ֆրանսացիք արդէն իսկ հրաժարած են ֆրանքէն»:


Երկրի մը համար, որ կ'առէ դուրսէն պարտադրուած փոփոխութիւններու ենթարկուի, Ֆրանսա Եւրոպայի նոր դրամը որդեգրած է անակնկալօրէն դիւրաւ եւ անտարբերութեամբ: Արդէն իսկ դրամանիշով վճարումներուն 95 առ հարիւրը եւրոյով տեղի կ'ունենայ:

Շաբաթավերջին հրապարակուած հարցախոյզներու արդիւնքներուն համաձայն, հարցապատուողներու հինգէն երկու հոգին միայն խստովանած են, թէ ֆրանքը կը փնտռեն: Խստութեան գնումներ ընողները դիտելով, դժուար էր հաւատալ, թէ եւրոն միայն 7 շաբաթ է ի վեր շրջանառութեան մէջ է:

Բազմաթիւ խանութպաններ յայտնած են, թէ շաբաթներէ ի վեր մէկ ֆրանք իսկ չեն տեսած: Հոյանտա Կիլորթէն ձերբապատած էր Յունարի վերջերուն, իսկ Իրլանտա դադրած էր փունջ գործածելէ անցեալ շաբաթավերջին:

ՀԱՏՈՒԱԾԱՅԻՆ ՆՈՐ ԲԱԽՈՒՄՆԵՐ՝ ԱՃՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՁ

ԱՖղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարպայ երէկ յայտնած է, թէ անհրաժեշտ ամէն ինչ պիտի ընէ ապահովութիւնը երաշխաւորելու համար՝ պրօսուշրութեան եւ օդային փոխադրութեան նախարարին սպանութենէն եւ բրիտանական խաղաղարար ուժերու դէմ յարձակումէ մը ետք:



Քարպայ մամլոյ ասուլիսի ընթացքին:

Սակայն մինչ Քարպայ կը խոստանար ապահովութիւնը պահպանել, հատուածային նոր բախումներ ծայր կու տային հիւսիսային եւ արեւելեան Աֆղանիստանի մէջ, ցուցանիշով մը այն դժուարութիւններուն, զորս ՄԱԿի պորակցութիւնը վայելող Համիտ Քարպայի կառավարութիւնը կը դիմագրաւէ:

Մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Քարպայ յայտնած է, թէ Հինգշաբթի գիշեր մայրաքաղաք Քապուլի օդակայանին մէջ սպանութեան նախարար՝ Ապտալ Ռահմանի մարդասպանները խիստ պատիժներու պիտի ենթարկուին:

Ան ըսած է նաեւ, որ միջապային համայնքէն յաւելեալ օժանդակութիւն պիտի ուզէ, եթէ ապահովութիւնը վատթարանայ: Ան մերժած է ընդունիլ այն մտաւախութիւնները, թէ

սպանութիւնը, որ ենթադրաբար գործուած է Հիւսիսի Դաշինքի ուժերու մէկ հատուածին անդամներու կողմէ, կրնայ կառավարութիւնը երկփեղկել: Կառավարութիւնը մեծամասնութեամբ նշեալ խմբակին անդամներէն բաղկացած է:

Ան ըսած է, թէ Ռահմանի սպանութեան կապակցութեամբ 5 հոգի ձերբակալուած է Թապուլի մէջ: Սպանութեան համար նախ ամբաստանուած էին պայրացած ուխտաւորներ, որոնք չէին կրցած համի համար Ս. Արաբիա մեկնիլ:

Երկու այլ կասկածելիներ կը հետապնդուին Աֆղանիստանի մէջ եւ Քարպայ յայտնած է, թէ ինքնավար տահ է, որ երեք այլ կասկածելիներ, որոնք ուխտաւորներու թոյնքով մը Ս. Արաբիա մեկնած են, Աֆղանիստան պիտի ղրկուին: Ռահմանի սպանու-

թիւնը եւ Քապուլի մէջ Շաբաթ օր միջապային սպանութեան ուժերու անդամներու վրայ առաջին յարձակումը լուրջ հարցադրումներու դուր բացած են՝ Աֆղանիստանի սպառնալից մասին:

Քարպայ յայտնած է, թէ բրիտանական ուժերուն վրայ յարձակումը չի թուիր լուրջ կապուած լինելու փորձի օտար ուժերուն դէմ:

Ան մը մահացած է, յայտնապէս երբ բրիտանական ուժերը հակադարձած են, սակայն աֆղան մը յայտնած է, թէ զոհը անմեղ էր: Անիկա ըսած է, թէ յղի կին մը հիւսանդանոց կը փոխադրէր, երբ բրիտանական ուժերը ինքնաշարժին վրայ կրակած են, սպաննելով երիտասարդ մը եւ վիրաւորելով չորս ուրիշներ:

Շաբաթ՝ էջ 10

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ ԻՐ ԱՇԽԱՏԱՆ ՔՆԵՐՈՒՆ ՍԿՍԱԻ ՕԹԱՆԻ ՄԵԿ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Շաբաթ, 16 Փետրուարին Երեւանի մէջ սկսաւ ՕԹԱՆԻ «Գործընկերութիւն Յանուն Խաղաղութեան» ծրագրի «Միացեալ Լաւագոյն Չանք - 2002» խաղաղապահ ուղիւղուած ծրագրման խորհրդածոյով: Ռազմափորձերը պիտի կայանան Վրաստանի մէջ, այս տարուան Յունիսին:

Կատարելով խորհրդածոյովին բացումը, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան արտաքին յարաբերութիւններու բաժնի պետ Կոր. Միքայէլ Մելքոնեան յայտնեց, որ խորհրդածոյովին կայացումը կարեւոր է այն առումով, որ «Գործընկերութիւն Յանուն Խաղաղութեան» ծրագրի ծիրէն ներս ռազմական համագործակցութեան առաջին միջոցառումն է, որ կը կատարուի Հայաստանի մէջ:

Խօսելով ծրագրի առանձնապատկան մասին, Մելքոնեան նշեց, որ շրջանային անվտանգութեամբ եւ կայունութեամբ շահագրգիռ տարբեր երկիրներու ներկայացուցիչներ, անկախ այդ երկիրներուն միջեւ առկայ տարակարծութիւններէն, համախմբուած են մէկ նպատակի շուրջ: Խորհրդածոյովը պիտի քննարկէ ռազմափորձերու կապակցութեամբ եւ իրագործման նախապատրաստական աշխատանքներ: Խորհրդածոյովին կը մասնակցին 13 երկիր-

Շաբաթ՝ էջ 10

ԱԶՐԴԵՅՑԱՆ ԱԼԻԵՒԻ ԴԵՄ՝ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ

Պաղեստին կեդրոնական հրապարակներէն մէկուն վրայ անցեալ շաբաթավերջին տեղի ունեցաւ ըողոքի ցոյց մը, նախագահ Հայտար Ալիեւի իշխանութեան դէմ: Յոյցը կազմակերպուած էր առանց արտօնագիրի, Ազրպէյճանի ժողովրդավարական կուսակցութեան կողմէ:

Ցուցարարները, որոնք կը պահանջէին Հայտար Ալիեւի հրաժարականը, եւ որոնք թիւը կը հասնէր 80ի, բախում ունեցան ապահովական ուժերու հետ: Ոստիկանութիւնը ձգտեց փամփուշտներ գործածեց ցուցելու համար ցուցարարները: Ձերբակալուեցան մօտ 40 ցուցարարներ, մինչ վիրաւորուեցան 5 ոստիկաններ: Ժողովրդավարական կուսակցութեան ղեկավարը՝ Սարտար Ճալալօղլու յայտարարեց, որ ընդդիմութիւնը պիտի շարունակէ պահանջել Ալիեւի հրաժարականը:

Նշենք, որ Հայտար Ալիեւ, ըստ Ազրպէյճանի առողջապահութեան նախարարին, Շաբաթ օր Միացեալ Նահանգներու մէջ ենթարկուած է փոսթաքի գործողութեան մը:

ԱՐԱՄ Ա. ՔՈՓԵՆՅԱԿԸՆ ՄԵԿԵՆՅԱԿ

Արամ Ա. կաթողիկոս երէկ առաւօտ մեկնեցաւ Դանիա, նախագահելու համար Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գործադիր վարչութեան ժողովին: Տարին երկու ամիսներով գումարուող գործադիր վարչութեան ներկայ ժողովը պիտի քննարկէ ԵՀԽի վերջին վեց ամիսներու գործունէութիւնը իր ծրագրային, տնտեսական, յարաբերական, վարչական եւ այլ երեսներով:

Գործադիր վարչութեան ժողովին առնթեր, վեհափառ հայրապետը հանդիպումներ պիտի ունենայ Դանիոյ Լուտերական Եկեղեցւոյ բարձրաստիճան պատասխանատուներուն, ինչպէս նաեւ տեղւոյն միջեկեղեցական խորհուրդի ներկայացուցիչներուն հետ:

ԹՄՐԵՑՈՒՑԻՉԻ ՑԱՆՔԸ ՊԻՏԻ ՓՃԱՑՈՒԻ

ԿԸ ՀԱՍՏԱՏԵ ՄԸՐ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր Շարաթ օր վերահաստատեց, որ թմրեցուցիչներու ցանքը փճացնելու իր որոշումը վերջնական եւ անդառնալի է, որովհետեւ անոնք վնաս կը հասցնեն երկրին վարկին եւ համալսարանական երիտասարդութեան:

Մըր յայտնեց, որ մօտ տասը միլիոն քառակուսի մեթր տարածութիւն հաշիշ ցանուած է Պեքաայի, Հըրմէլի, Ժիպէլի եւ Պաթրուսի մէջ:

Նախարար Մըր յայտնեց, որ պահովութեան կեդրոնական խորհուրդը Հինգաբերթի օր պիտի դուրսդնէ ժողով մը, որուն ընթացքին պիտի որոշէ տասը հազար գինուոր եւ ոստիկան յատկացնել այս արշաւին, որ պիտի սկսի Փետրուարի վերջերուն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱԳԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՍՏԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԸՆԵՒ ԻՐ ԿԱՐԵԼԻՆ

Կ'ԸՍԵ Խ. ՀԸՐԱՌՈՒԻ

Պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուի երէկ նկատել տուաւ, որ պետութեան միջոցները շատ սահմանափակ են, մինչ իրանական ընկերութեան կարիքները մեծ են: «Կառավարութիւնը կ'աշխատի սրբազրելու կացութիւնը, կրճատելով ծախսերը, իսկ քաղաքացիներ իր պարտաւորութիւնը վճարելով՝ կ'օժտուակէ պիւտճեկական բացի դարձանումին», նշեց ան:

Դժուար է պաշտպանել որեւէ տուրք, մասնաւոր այս պայմաններուն մէջ, բայց կառավարութիւնը կը փորձէ հաւասարակշռել պետութեան կարիքներն ու քաղաքացիներին վիճակը՝ հարկային համակարգի արդիականացումով, ըսաւ ան:

Հըրաուի բացատրեց, որ կառավարութիւնը առեւտրական մենաշնորհները ջնջած է, սակերու նուազումի հեռանկարով:

ՄԵԾ ԱԻԱԶԱԿՆԵՐ Կ'ՕԳՏՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱԳԸ

Կ'ԸՍԵ ՇԵՅՆ ՆԱՍՐԱԼԼԱ

Հըրգալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլա Շարաթ օր շէյխ Ապպաս Մուսաուիի եւ շէյխ Ռադէպ Հարպի յիշատակին կազմակերպուած հանդիսութեան ընթացքին ըսաւ, որ «երկրի տնտեսական եւ ընկերային փլուզումէն կ'օգտուին կարգ մը մեծ աւագակներ»:

Նապի Շիթի մէջ կատարուած հանդիսութեան ընթացքին շէյխ Նասրալլա նշեց, որ հիմնական հարց մը կայ, որ ցարգ չէ լուծուած եւ չէ դարձանուած, եւ մարդիկ որքան տուրք վճարեն, ծախսերը կրճատեն եւ օժտուակութիւններ հասնին, պիւտճեկական բացը պիտի չզարմանուի, որովհետեւ հարցի լուծման հիմնական պայմանը վարչական եւ դրամական փոփոխութեան վերջ դնելն է:

«Լիբանանի մէջ պէտք է փնտռել ոչ միայն պատերազմին ընթացքին հարուստացողները, այլ նաեւ խաղաղութեան ընթացքին հարստացողները, եւ պետութեան մասնուած գումարները դրամանատուներուն եւ ընկերութիւններու բաժնետոմսերուն մէջ են, եւ աղքատներ մեծահարուստ դարձան երկրի դրամական համակարգի փոփոխութեան եւ պետական գումարներու մսխումին պատճառով», ըսաւ Նասրալլա: Ան աւելցուց. «Եթէ վարչական փոփոխութեան կողմէն չընկերվար ծառայողներ արժանաւոր մնան իրանական ձեռքբերու մէջ: Ժոմպլաթ մաղթեց, որ դատական իշխանութիւնը օր մը դառնայ պարկեշտ եւ անկախ քաղաքացիներէն եւ վերահաստատեց իր կեցուածքները Սուրիոյ հետ յարաբերութիւններուն, զինուորական ծառայութեան, ապապետականացումին եւ այլ ընդհանուր հարցերու վերաբերեալ:

ԺՈՄՊԼԱԹ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ

Ընկերվար Յաւաթի մական կուսակցութեան նախագահ, Երեսփոխան Ռալիտ Ժոմպլաթ երէկ խիստ ոճով քննադատեց զաղտնի սպասարկութիւններու գործունէութիւնը եւ վերահաստատեց իր կեցուածքները Սուրիոյ հետ յարաբերութիւններուն, զինուորական ծառայութեան, ապապետականացումին եւ այլ ընդհանուր հարցերու վերաբերեալ:

Ժոմպլաթ երէկ զխաւորեց Ընկերվար Յաւաթի մական կուսակցութեան ընդհանուր ժողովը, որ գումարուեցաւ «Պօռիվաթ» պանդոկին մէջ, ներկայութեամբ 434 կուսակցականներու, որոնց շարքին էին նախարար Դազի Արիտի եւ երեսփոխաններ Աքրամ Շըհապէպ, Ալաէտտին Թըրօ եւ Ալման Շըբէյր:

Ժոմպլաթ իր խօսքին մէջ պահանջեց պաշտպանել Լիբանանեան Համալսարանը, եւ ըսաւ, որ կողմնակից է առեւտրական միակ ներկայացուցիչի դրութեան եւ մենաշնորհներու ջնջումին,

թեան դէմ լուրջ եւ ընդհանուր պայքար չմղուի, ապա ոչինչ կարելի է դարձանել, եւ տնտեսական ու ընկերային անկումային ընթացքը պիտի շարունակուի, եւ անկէ պիտի շարունակեն օգտուել մեծ աւագակները»:

Շէյխ Նասրալլա նաեւ հաւաստեց, որ իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն պիտի չյաջողի վերջ դնել ինթիֆատային, եւ անոր նոյն թափով շարունակուիլը մօտ առնէն յաղթանակով կրնայ պսակուիլ, որովհետեւ առանց պահանջներ կերպար չեն կրնար դիմանալ իսրայէլացիք եւ շուտով պիտի հրաժարին 1967ին իրենց գրաւած հողերէն: Ան կոչ ուղղեց պաղեստինցիներուն՝ պահպանելու իրենց միակամութիւնը:

«Անցեալին, իսրայէլացիք լիբանանցիներ կը մարզէին սպաննելու լիբանանցիներ եւ միջամուխ կ'ըլլային մեր ներքին հարցերուն, իսկ այսօր անոնք Լիբանանը կ'ամբաստանեն պաղեստինցիներ զինելու եւ իրենց ներքին հարցերուն միջամտելու յանցանքով», ըսաւ ան:

«Իսրայէլեան բանակի գերակշռութեան դէմ հայրուկային կռիւ պէտք է մղել, ուստի լիբանանեան բանակը հարաւ ուղարկելը այդ բանակը գոհելու համագոր է, եւ հոն պէտք է մնայ դիմադրութիւնը», ըսաւ ան:

Ժոմպլաթ հետ յարաբերութեան գծով նկատողութիւններուն մասին հրապարակաւ պիտի չխօսիմ, եւ այս հարցը կը պատկանի երկու երկիրներու պետական պատասխանատուներուն, նկատի առած իսրայէլեան եւ ամերիկեան վտանգաւոր արշաւը: Բայց մեր նկատողութիւններն ու պահանջները, եւ սրբազրութեան պահանջը անփոփոխ կը մնան», ըսաւ ան:

Ժոմպլաթ ըսաւ, որ միայն իրաքեան ընդդիմութիւնը կ'որոշէ վարչաձեւի փոփոխութիւնը եւ ոչ թէ Միացեալ Նահանգները, իսկ պաղեստինցի ժողովուրդը անպակաս իր մնայ իր օրինական իրաւունքներուն նկատմամբ: Ան նաեւ յիշեցուց քիւրտերու ողբերգական վիճակը:

Ան նաեւ պահանջեց վերջ դնել պետութեան ծովային կայունացումներուն դէմ օրինազանցութիւններուն եւ ջնջել զինուորական պարտադիր ծառայութիւնը:

Ժոմպլաթ հաստատեց, որ երկրագործական արտադրութիւններու մաքսաներգում չկայ եւ Սուրիա ոչ մէկ յանցանք ունի, որովհետեւ նախկին կառավարութիւնը ստորագրած է անոնց փոխանակման ազատութեան համաձայնագիրը: Ան նաեւ նկատել տուաւ, որ պետութիւնը անգոր է փակելու քարահատման վայրերը, կամ միջազգային հեռաձայնի ապօրինի գրասենեակները, որովհետեւ պետութեան հզօր քաղաքական ուժեր կան: «Ոչ ոք թող կարծէ, թէ մենք սուրիացի, երկրացի, սրի լանքացի կամ Ֆիլիստինցի բանուորներուն դէմ ազգայնամոլ արշաւ կը մղենք, սակայն աշխատանքի նախարարին եւ կառավարութեան կը պահանջենք առաջնահերթութիւն տալ լիբանանցի բանուորին», ըսաւ ան: Ժոմպլաթ վերահաստատեց, որ սկզբունքով դէմ է ապապետականացումին:

Ան զարմանք յայտնեց զաղթականներու տունդարձը ազգային դրամանիչի պահպանումին կապելու փորձերուն համար, «որովհետեւ անիկա ազգային առաջնահերթութիւն է»:

Ա Խ ԱՅՍ ՉԵԹԻՆԿԸ

Համակարգիչի վրայ չէթիւնկ ընելու ախտը վարակած է յատկապէս պատանիները, որոնք օրական երկար ժամեր հաւատարմօրէն կը գամուին պատուաշին առջեւ, եւ չեն գիտեր ինչ մղումով, կատաղի ու հիւսանդագին մոլուցքով մը կը սկսին չէթիւնկի:

Ուրիշ տեղ մը իր պատուաշին առջեւ նոյնպէս գամուած մէկու մը հետ կը «խօսին» անձայն. միայն տպուած նախադասութիւններ կ'երեւին պատուաշին վրայ ու այսպէս կը փոխանակեն կարծիքներ, պատգում, սէր...

Ինծի համար չէթիւնկի քանդիչ ազդեցութիւնը հայերէնի վրայ շօշափելի դարձաւ միայն վերջերս: Թէեւ կը վզայի, որ այս տվորութիւնը իր լուր աւերը կը գործէ մեր պատանիներուն շարքերուն մէջ, նկատի առած հայ գիրքի ընթերցանութեան բացակայութիւնը: Բայց ասիկա ուրիշ ցաւ է:

Վերադառնալով չէթիւնկին: Վեց դասարաններու հայերէն կը դասաւանդուի եւ ամէն պահի առաջին 10 վայրկեանը անպատրաստից ուղղագրութիւն կ'ընենք: Ասիկա վերածուած է սովորութեան:

- Այսօր առաւելաբար պիտի կեդրոնանանք 2 եւ 3 գիրերու վրայ, ըսի եւ աշակերտներուն թելադրեցի կեդրոնանալ:

Նոյն օրը երեկոյեան թուղթերը սրբագրեցի եւ հինգերորդ թուղթին վրայ գրուած երկու բառեր պզտիկացիս պիտի:

Աշակերտուիկի մը գրած էր երկու բառեր, որոնց ուղղագրութիւնը նախ շատ արտառոց թուեցաւ. սակայն երկվայրկեաններ էտք յանկարծ միտքս յուսաւորուեցաւ եւ մնացի ապշած. զիսէն հարուստ ստացած մէկու մը վզացումը ունէի:

Աշակերտուիկի գրած էր «փորդետիս» եւ քիչ մը աւելի վար «ստեղսայ» բառերը:

Յաջորդ օրը դասարանին մէջ աշակերտուիկին քովս հրաւիրեցի: Յոյց տուի թուղթը:

- Ի՞նչ բառեր են ասոնք:
- Ա՛ պարոն... կարմրեցաւ եւ փորձեց ծպտիլ: Այս ըսաւ: - Օրական երկար ժամեր չէթիւնկ կ'ընեմ: Անգլերէնով հայերէն կը գրեմ: Նոյնը թուղթին վրայ գրեք եմ:

Հանելուկը պարզուեցաւ: Անգլերէնով 2 կամ 3 կը գրուի - is - գիրերը՝ իրարու միացնելով: Այս աշակերտուիկին «փորձեցի» բառը ճիշդ հնչած է, բայց գրած է անգլիատառ. եւ որովհետեւ հայերէն պէտք էր գրէր, այս անգամ գործածած է հայատառ անգլերէն մը կամ չեմ գիտեր ինչ...
- Աղջիկս, մեր այբուբենին մէջ 2 կամ 3 ունինք. այս - դս - ի՞նչպէս գրեցիր:
- Պարոն ասիկա առանց մտածելու կը գրուի:

Այդպէս ուրեմն: Չէթիւնկը արդէն մեր ենթադրածին շատ աւելի ամուր արմատներ նետած է մեր պատանիներուն ուղեղներուն մէջ:

Մտացեալը դուք դատեցէք:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ՃԱՆՈՒ ԶԵՆՂ ՅԱՐԿԱԲԱԺՆԵՐ ԵՒ ԽԱՆՈՒԹԵՐ ՍՉԸՆԻ ՍԿԻՉԸ
- ԱՆԹԻԼԻԱՍ -

160 քառ. մէթր, 3 ննջասենեակ, ձաշասենեակ, հիւրասենեակ եւ երկու բաղնիք: Գեղատեսիլ վայր եւ ծովահայեաց դիրք:
• **Վճարման դիրքութիւններ:**

Մանրամասնութեան համար դիմել՝ հեռաձայն 04 - 523926 եւ 03 - 666296:

MESROBIAN TECHNICAL COLLEGE
The Pioneer In Technical Education

COMPUTER COURSES

©

MESROBIAN COMPUTER LEARNING CENTER

BASIC COURSES
(Windows - Word - Excel - Power Point - Microsoft Outlook - Internet Overview)

SPECIALIZED PROGRAMS

- * **Graphics & Animation**
Adobe Photoshop - Premiere - Illustrator - Corel Draw - Quark Xpress - 3D Studio Max - Free Hand
- * **Computer For Businessmen**
Microsoft Access - Microsoft Project - Microsoft Visual Basic - Visual FoxPro - Dolphin
- * **Computer For Engineers & Architects**
AutoCAD - Auto Architect

3rd Session
MONDAY, 18TH OF FEBRUARY 2002

Arax Street, Bourj Hammoud
Tel: (01) 260504, Fax (01) 262955
E - mail: mesobca@dm.net.lb
Web Site: www.mesrobian.com

«Ո՛վ երկիր...», Տիրոջը խօսքին մտիկ ըրէ՛»
(Երեւ. 22.29)

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՒ ԶԱՐՈՋՉԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՆԵՐ

կը ներկայացնէ՝ Հայրենիքէն ժամանած

Բարեշնորհ Ազոյր Սրկ. Սարգիստեան

Թուական	Ժամ	«Հայ Առաքելական Եկեղեցւոյ Եղբայրակցութիւն»	Վայր	
Կիր.	17/2/02	երկ. 6:00	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թ Թաւուտա
Հինգշ.	21/2/02	կ.ա. 10:30	(Քոյրերու մասնաճիւղ)	Պէլլի Ել-Գօգօ
		երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թաւուտա
Ուրբ.	22/2/02	երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թաւուտա
Շբ.	23/2/02	երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թաւուտա
Կիր.	24/2/02	երկ. 6:00	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թաւուտա
Երկշ.	25/2/02	կ.ա. 9:30	(Քոյրերու մասնաճիւղ)	* Ամանոս
		երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թաւուտա
Երեքշ.	26/2/02	երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թաւուտա
Չորեք.	27/2/02	կ.ա. 10:00	(Քոյրերու մասնաճիւղ) Միջինք	Թաւուտա
		երկ. 8:00	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	* Յանար
Հինգշ.	28/2/02	կ.ա. 10:30	(Քոյրերու մասնաճիւղ)	Պէլլի Ել-Գօգօ

© «Էլիւմ» ի Ընկերային Կեդրոնի հանդիսարանին մէջ:
 * «Պէլլի Ել-Գօգօ» ի, (سيدة النجاة) Եկեղեցւոյ մէջ:
 * «Յանար» ի մատրան մէջ:
 * «Ամանոս», (المانا) դպրոցին կից:
 - Յարեւել մանրամասնութեան համար հեռաձայնը - 01/251066 - 03/885123

ՀՐԱԻԷՐ

ԹՐԳԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ԿԱՅԱՆԻ ՄԸ ՀԵՏ ԳԱՀՏՆԻ ԿԱՊԵՐ

Հայաստանի ապահովական շրջանակները Չորեքշաբթի, 13 Փետրուարին յայտնեցին, թէ Թուրքիոյ ի նպաստ լրտեսութեամբ մեղադրուող Մուրատ Բոլոլեանի ձեռնարկութիւնը կրնայ հիմնաւորուած ըլլալ թրքական հետախուզիչ կայանի մը հետ իր չհարապարակուած կապերով:

Մ. Բոլոլեանի դէմ դաւաճանութեան մեղադրանքը կրնայ ծագած ըլլալ թրքական «ԹԻՎԻ 6» կայանին իր աշխատակցութեան: Հայաստանի ազգային նախարարութեան նախարարութեան քննիչները կը հաւատան, որ Թուրքիա ծնած Բոլոլեան նշեալ կայանին համար գործած է «գաղտնօրէն» հրապարակուած եւ գաղտնի տեղեկութիւններ փոխանցելով Հայաստանի մասին:

Անցեալ շաբաթ ազգային ապահովութեան փոխ նախարար Գրիգոր Գրիգորեան մամուլին յայտնեց, որ նախարարութիւնը բաւարար չափով հաւաստի տեղեկութիւններ ունի փաստելու, որ Բոլոլեան «քաղաքական, տնտեսական եւ գինուորական տեղեկութիւններ» քաղած է թրքական գաղտնի սպասարկութեան (ՄԻԹ) համար: Սակայն Գ. Գրիգորեան եւ նոյն նախարարութեան այլ պաշտօնատարներ մերժեցին յանձնել մանրամասնութիւններ հրապարակել լրտեսական այս հարցին մասին:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՂՋԵՐԹ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ

Չորեքշաբթի, 13 Փետրուարին, Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի կեդրոնական կոմիտէի Յարաբերական մարմինն յայտարարեց, որ իր կողմէն կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Վիլյամ Եւզուպեանն եւ Ալեքսիս Իսփէնճեանն, հանդիպում մը ունեցան Լոս Անճելէսի մէջ Լիբանանի հիւպատոս զոկու. Ժան Մաքարոնի հետ եւ իր պաշտօնավարութեան աւարտին առիթով ողջերթ մաղթեցին: Հ. Յ. Դ. ներկայացուցիչները նաեւ գնահատեցին հիւպատոսին աշխատանքները, ինչպէս նաեւ՝ ջերմ հոգածութիւնը ամերիկահայ գաղութին նկատմամբ:

Իր կարգին, հիւպատոս Մաքարոն շնորհակալութիւն յայտնեց գաղութին կողմէ հիւպատոսարանին ցուցաբերուած գործակցութեան համար եւ իր ջերմ մաղթանքները փոխանցեց քաղաքացիական շրջանակներէ: Դոկու. Ժան Մաքարոնի պաշտօնավարութիւնը կ'աւարտի Փետրուարի վերջաւորութեան: Ան Լիբանան պիտի վերադառնայ:

ՈՌԻՍԱՐԱՅ ԳԱՂՈՒԹ «ՌԶՄ ԼՐԱՏՈՒ» ԱՄՍԱԳԻՐԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՅ

Վերջերս լոյս տեսած է «Ռուսիոյ Հայերու Միութիւն» (ՌԶՄ) համառուսական հասարակական կազմակերպութեան պաշտօնաթերթի՝ «ՌԶՄի լրատու» ամսագրի արձանագրութիւնը:

Ամսագիրը պիտի ներկայացնէ միութեան, Ռուսիոյ բոլոր շրջաններու հայ համայնքներուն գործունէութեան ոլորտները, ռուս-հայկական յարաբերութիւնները եւ Ռուսիոյ ու Հայաստանի վերաբերող այլ հրատապ նիւթեր:

ԵՐԵՒԱՆԻ ԶԵՌՈՒՑԻՉՆԵՐԸ ԴԱԴՐԱԾ ԵՆ ԱՇԽԱՏԵԼԷ

«Նոյեան Տապան» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Երեւանի կեդրոնական ջեռուցիչները 10 Փետրուարին դադարած են աշխատել:

2001-2002 ձմեռան եղանակին Երեւանի բնակչութիւնը ջեռուցման համար 20 միլիոն դրամի փոխարէն վճարած է 1 - 1,5 միլիոն դրամ: Երեւանի ջեռուցման ընկերութեան տնօրէն Ռոպէրթ Բուհարեան ըսած է, թէ ասոր պատճառով ընկերութեան պարտքը աւելցած է 16-18 միլիոն դրամ եւ հասած է 5,5 միլիարդ դրամի:

ՄԱՐԴՈՒԺԻ ԾԵՐԱՅՄԱՆ ՀԱՐՅԸ՝ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի նախագահութեան նիստին ակադեմիայի փոխնախագահութեան եւ իրաւունքի հիմնարկի տնօրէն Գեորգ Պողոսեան նշեց, որ հայկական գիտութեան առջեւ ծառայած է մարդու ծնունդի ծնունդը, որ առաջին հերթին կախեալ է գրամական միջոցներու բացակայութենէն:

Վերջին տարիներուն Հայաստանի մէջ տեղի կ'ունենայ գիտական ներուժի արտահոսք, որ նախնական գնահատումներով, միայն գիտական աստիճան (գիտութիւններու թեկնածուներ եւ դոկտոր) ունեցող գիտնականներու շրջանակին մէջ կը կազմէ 25 առ հարիւր: Արտագաղթի այս տեսակը կարելի է անուանել «ուղղղներու արտահոսք», եւ ինչպէս ցոյց կու տայ փորձաքննութիւնը, այդ անձնակազմին մեծ մասը այլեւս չի վերադառնար Ռուսիայէն, Արեւմտեան Եւրոպայի երկիրներէն կամ Ամերիկայէն: Ան նաեւ նշեց, որ արտագաղթողներուն 80 առ հարիւրը ունի բարձրագոյն կրթութիւն եւ կը կազմէ բնակչութեան աշխատունակ հատուածը, որ կը տարուրբերի 18-55 տարեկանի միջեւ:

ԵՌՈՒՐՈՅԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան «Արցախի Պաշտպան» զորամասան միջոցով վերջերս շրջանառութեան մէջ մտաւ կանխիկ ետերդ:

Ըստ գրամատան պատասխանատուներէն Պարոյր Գրիգորեանի, ներկայիս զորամասունը ազատ կերպով ետերդի առուծախի գործառնութիւն կը կատարէ եւ աւսորուան դրութեամբ 1 ետերդի փոխարժէք ճշդուած է 500 դրամ:

ՊՈԼԻՍ

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ ՊԻՏԻ ՎԵՐԱՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Պոլսոյ մէջ գտնուող եւ 19րդ դարուն կառուցուած պուլկարական Ս. Ստեփան եկեղեցւոյ վերանորոգութեան շուրջ պուլկարական եւ թրքական կառավարութիւնները մէկ տարի է ի վեր բանակցութիւններ կը վարեն: Վերանորոգութեան արտօնութիւն շնորհելու դիմաց, թուրքիա կ'ուզէ վերատիրանայ Փոլսոյ մէջ (Պուլկարիա) գտնուող 15րդ դարու մզկիթի մը:

Յայտնեց, որ եկեղեցին կառուցած է 19րդ դարու հայ ճարտարագետ Յովսէփ Ազնաւուր: Ան իրեն նիւթ գործածած է երկաթէր, որովհետեւ եկեղեցին ծովեզրեայ հողը տկար էր քարաշէն շէնք կառուցելու համար:

ՆԱԽԱԳԱՏ ԲՈՉԱՐԵԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ ՍԼՈՎԱՔԻԱ

Սլովաքիոյ նախագահ Ռուտոլֆ Շուսթրի հրահրող 25 Փետրուարին երկրորդ այցելութեամբ Պրախիսլաւ պիտի հասնի Հայաստանի նախագահ Ռոպէրթ Բոչարեանի գլխաւորած պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմեն արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, արդիւնաբերութեան եւ առեւտուրի նախարար Կարէն Զժմարիտեան, կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեան եւ այլ պաշտօնատար անձեր:

Սլովաքիոյ տնտեսութեան նախարարութիւնը լրջօրէն կը պատրաստուի իր այս պատրաստութեան համարելով, որ երկրի տնտեսութեան նախարարի 2000 թուականին կատարած այցելութենէն ետք ասիկա ամէնէն մեծ կարելիութիւնն է երկու երկիրներուն միջեւ տնտեսական կապերու զարգացման համար:

ԵԱՆՈՒ ԶԱՐԿԱՐԱԾԻՆ

● Թրատի շրջան 1 սեւեակ, խոհանոց եւ բաղնիք: Հեռ. 01-248277:

STUDIO **Lantern**
● 4րդ ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ
Հեռ. 01-268866
ԵՒ 03-695399

ԱՐՑԱԽ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

13 Փետրուարին Լեռնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարար Նաիրա Մելքոնեան ընդունեց՝ օր մը առաջ Ստեփանակերտ հասած Հայաստանի խորհրդարանական պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մնացուցիչ յանձնարարի նախագահ Յովհաննէս Յովհաննիսեանի:

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի կառավարութեան ներկայացուցիչներուն միջեւ տեղի ունեցած զրոյցին արծարծուեցաւ երկու պետութիւններու միջեւ գործակցութեան զարգացման հարցը, ի մասնաւորի՝ արտաքին քաղաքականութեան մէջ: Ն. Մելքոնեան նշեց, որ նոր աշխարհակարգի ձեւաւորման ներկայ հանգրուանին կարեւոր է արտաքին քաղաքականութեան գլխաւորութիւններէն: Արձանագրուեցաւ անհրաժեշտութիւնը՝ արտաքին քաղաքականութեան մէջ երկու հայկական պետութիւններու քայլերը համակարգելու, համազգային շահերը աւելի արդիւնաւէտ կերպով պաշտպանելու համար:

Հանդիպման մասնակիցները ընդգծեցին, որ հայկական դիւանագիտութեան առաջնահերթութիւններէն մէկը կը մնայ Ղարաբաղի հարցը, որուն լուծման համար անհրաժեշտ է ներդաշնակել երկու պետութիւններու քայլերը:

Հանդիպման մասնակիցներուն կարծիքով, Ղարաբաղի մէջ ժողովրդավարական գործընթացներու ամբարկումը կը հանդիսանայ Ղարաբաղի հարցի լուծման գլխաւոր պայմաններէն մէկը:

ԱՐԽԱԶԻՈՅ ԴԷՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԶՆՋԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔ

Սուխումի «Կոնուկ» հայկական մշակութային-բարեգործական ընկերութիւնը արխազահայութեան անունով դիմած է ՄԱԿի գլխաւոր քարտուղար Բոքի Անանի՝ Արխազիոյ դէմ միջազգային հանրութեան եւ ԱՊՀ կողմէ սահմանուած քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցները ջնջելու խնդրանքով:

«Ռեփուէլիթա Արխազի» թերթին կողմէ հրատարակուած «Կոնուկ»ի ուղերձին մէջ կ'ըսուի, թէ Արխազիան պետական անկախութեան հասաւ պայտանութեամբ վրաստանի գրաւման բանակէն, սակայն Թիֆլիս յաղթեցաւ մոլորութեան մատնել համաշխարհային հանրութիւնը, որուն հետեւանքները եղան Սուխումի դէմ ընդունուած պատժամիջոցները:

Ուղերձին մէջ կը նշուի նաեւ, թէ այս ձեւով կը խախտի Արխազիոյ քաղաքացիներուն տարրական իրաւունքները: Այդ խախտումներէն է ազատ տեղաշարժման իրաւունքի սահմանափակումը, որ կարգելու է այլ երկիրներու մէջ (ինչպէս Հայաստանի) ապրող մօտիկ հարազատներու հետ շփումը:

«Կոնուկ»ը կը խնդրէ Բոքի Անանի լուծում գտնել այս հակամարտութեան վիճակին, որ կը հակասէ ՄԱԿի կանոնադրութեան եւ Մարդու իրաւունքներու համաձայնահանուր հռչակագրին:

ԹՈՒՐԲԻՈՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ» ԲԱՒԱՐԱՐ ԶԵՆ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմի հետ Հինգշաբթի, 14 Փետրուարին հանդիպում մը ունենալէ ետք, Եւրոպական Միութեան ընդարձակման աշխատանքներու յանձնակատար Կիւնթըր Վերհօլըն յայտարարեց, թէ վերջին քանի մը ամիսներուն ընթացքին Թուրքիոյ կառավարութեան առաջադրած եւ խորհրդարանին կողմէ վաւերացուած քաղաքական «բարեկարգումներ»ը հեռու կը մնան Եւրոմիութեան սահմանած չափանիշներէն:

Թուրքիան 1999ին անդամակցութեան թեկնածու դարձուցած Եւրոմիութիւնը կը պնդէ, թէ այդ գծով բանակցութիւնները պիտի չսկսին, եթէ Անգարա յատկանշական բարեփոխումներ չկատարէ մարդկային իրաւանց մարզին մէջ:

Վերհօլըն ընդունեց, որ տեղի ունեցած փոփոխութիւնները կարելի է բարեփոխում համարել... միայն թրքական չափանիշներով: «Սակայն եթէ անոնց մօտենանք արեւմտեան չափանիշներով, ապա հարցեր կը մնան», աւելցուց ան:

Յանձնակատարը նաեւ յայտարարեց, թէ Թուրքիա պէտք է մահապատիժ ջնջել իր օրէնսգիրքէն եւ շէնք, թէ անդամակցութեան բանակցութիւններուն սկսելու թուականը կախեալ է այս բարեփոխումներէն:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ճաշի եւիսը 300 ամեր. տոլարով:

- Տեր եւ տիկին ժան Սոմճեան՝ Սոմճեան ընտանիքի ԳՆՃԵԿԵԱԼՆԵՐՈՒ ԻՈՒՆԵՐՈՒՆ ԿԱՄԱՐ:

«ԱԼԱՅՐԱՆԿԱ» ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ..

Վստահ չեմ, թէ «հեռուի սուրբը գորակը կ'ըլլայ», ինչպէս կ'ըսէ հայկական առածը, սակայն կրնամ վստահօրէն ըսել, թէ «ուրիշները աւելի համով կ'ըլլայ, աւելի ցանկալի»: Այլապէս ինչո՞ւ Յակոբ Պարոնեանը մէկ ու կէս դար առաջ պիտի խօսէր մեր «օտարամտութեան» մասին, բան մը, որ կարծես ազգային յատկանիշ է ու նկարագիր, քանի որ 150 տարի է ի վեր բան չէ փոխուած: Պոլիս ապրինք, թէ Թիֆլիս, Հայաստան, թէ Սփիւռք, միշտ մեր աչքերը ուրիշին ունեցածին վրան է:

Եթէ պոլսահայութիւնը Արեւմտեան Եւրոպայի ոտնահետքերով կը քալէր, անկէ ընդօրինակելով գրեթէ ամէն ինչ՝ հազուադէպ միջնադարու երաժշտութիւն: Եթէ խորհրդային շրջանին կամայ, թէ ակամայ ռուսականին ետեւէն վազեցինք ու երբեմն «Պապէն աւելի պապական» ըլլալու գնով, խելագործին ու անյագօրէն ընդօրինակեցինք ու ներմուծեցինք: Եթէ սփիւռքահայը ինկած երկրի ազդեցութեան տակ ակամայ հրաժարեցաւ շատ մը ազգային արժէքներէ ու հայուն բնորոշ յատկութիւններէ... հիմա՞, հիմա՞, Հայաստանի մէջ որո՞ւ ազդեցութեան տակ ենք, որ տակաւին նոյն օտարամտութեամբ տարուած, երկրին դիմագիծը վերահայկականացնելու փոխարէն, այս անգամ ուրիշ ձեւով կ'աղաւաղենք ու կը խաթարենք:

Դեռ չենք ազատած օտար անուններու հմայքէն, ճիշդ է, եթէ հիմա Սերգէյ ու Վարդան, Լենդրոզ ու Սոթախ չկայ, ապա՞ ուզածիդ չափ Բրիտանիան Մոնիթըք...

Իսկ երբ կը քալես Երեւանի գլխաւոր փողոցներով եւ աջ ու ձախակ կը կարդաս նորարաց խաղատուն-քաղինոններու, վաճառատուններու, հիւրանոցներու ու ճաշարաններու անունները, վարկեան մը այն պատրանքը կ'ունենաս, թէ ասիկա Երեւանը չէ, այլ՝ Նիւ Եորք կամ Փարիզ...

Ռուսականը որոշ ետքայլ մը ապրած է, սակայն ինչո՞ւ անմիջապէս անոր տեղը երուրսականն ու ամերիկեանը եկած ըսածն են: Երեւի դուրսէն եկած տուրաններուն հետ ուրիշ բաներ ալ կու գան կողմնակիր...

Երբեմն կը մտածեմ, մեր հարեւան ժողովուրդներն այլ հայերու նման են: Ռուս մը կամ վրացի (չխօսինք ազգերիներու անուններ) կա՞յ, որ իր գաւկիցի անունը Հայկ կամ Խաչիկ, Անահիտ կամ Ազնիւ զնէ: Ինչո՞ւ ոչ չէ՞ որ մենք շատ ունինք Եւրոպայի ու Վալտեաներ, վախճաններ ու Սողոմոնները դեռ չխօսինք Աթաբէկ-Մաթաթէկի մասին): Ինչո՞ւ այս ժողովուրդները աւելի անխանձախնդր են իրենց մշակոյթին, աւանդութիւններուն ու ազգային արժէքներուն նկատմամբ:

Դեռ մենք գմբջ «ազգայնամուտ» կ'որակենք: Ո՞ւր է... մեր ինչը ազգայնամուտ է՞ հազուա՞ճքը, կեցեալ՞ճքը, գրա՞ծը, կարգացա՞ծը, մեր երգե՞րը, մեր թատրոննե՞րը...

Լաւ որ քիչ մը հայերէնախօսութիւնը մնացեր է, թէ ոչ ուրիշ՝ կարելի է իմանալ, որ այս ժողովուրդը հայ է ու այս երկիրն ալ Հայաստան:

- Այ՞... «Թաքսի ելլու»... մի հատ մեքենայ ուղարկէք «Բոնիթինները» հիւրանոց, գնալու ենք «Մեթեմաթ» ռեսթորան... չգիտե՞ս... փրոսփեքթի վրայ...

Եկուր ալ մի ճաթիր... ՀԻՄԵՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՀԱՄՕ ՕՇԱՆՁԱՆԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ
ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 18 Փետրուար 2002ին, երկուշաբթի ժամը 8:00ին, Նաիր Էլ Սոթի Աճի ակումբին մէջ:
Ծանօթ: Ժամը 8:30ին ներկայութեան թիւը մեծամասնութիւնը պիտի նկատուի:
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Շ.Բ.Ս. Շ.Ե.Ը.
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ
Կը ներկայացնէ՝
ԷՏՈՒԱՐՏՕ ՏԸ ՅԻԼԻՓՓՈՒ
«ԵՐԵՒԱՆԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ԵՐԵՒԱՆԵՐ»
ԲԵՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ՝
Շ. Շ. Արուստի Վաստակաւոր Գործիչ, Պետական Սրբաճառի Դպրատան Գործիչ, **ՓՐՈՑ. ԵՐՈՒԱՆԻ ԶԱՋԱՆՃԵԱՆԻ**
Տեղի կ'ունենայ 28 Փետր. 1,2,3,7,8 (Կալա), 9, 10 Մարտ 2002, երկուշաբթի ժամը ճիշդ 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

Կրթական Խորհուրդ

ՄՊԱՆԱԽՕՍ ԻՍԼԱՄՆԵՐՈՒՆՈՐ ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹԻՒՆ ՄԸ

«ՆԻՒ ԵՈՐԵ ԹԱՅՄԱ» ԿԸ ԳՐԵ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԵՋ ԵՏՏՁԵՏԵ ԲԱԶՄԱՑՈՂ ԸԱԲԱՏԱՓՈՒՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ԶԱՐԲԻՆ ԿԸ ՆՇՈՒԻ ՆԱԵՒ ԸԱՅ ՄԸ

Խղճի ազատութիւնը յաճախ ցուցանիչ կը համարուի ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան: Սակայն աւելի յաճախ անհիկա կը գործածուի իբրեւ քաղաքական լծակ եւ թափանցուծի ու իշխանութեան տարածումի ըզրարկուած միջոց: Հաւատափոխութիւնը կամ կրօնական տարբեր խմբաւորումներու միացումը երեւոյթը իր հերթին, ոգեղէն կարիքներէ աւելի՝ զգացական, ընկերային կամ ցիւրքեղէն պահանջներ գոհացնելու մղումի մը արդիւնքն է:

Քովի սիւնակներով տրուած երկու յօդուածները, որոնք անցեալ Դեկտեմբերին եւ Յունուարին լոյս տեսած են «Նիւ Եորք Թայմս» թերթին մէջ, կը նկարագրեն դաւանափոխութեան եւ աղանդաւորներու կողմէ քարոզչական արշաւի մը առթած հակազդեցութիւնները: Առաջինը կը ներկայացնէ Միացեալ Նահանգներու մէջ հետըզհետ թափանցող դաւանափոխ գաղթականներու երեւոյթը, ինչ որ մտածել կու տայ, թէ ձուլումի հոլովոյթին մէջ ամեն տեսակ փոփոխութիւն ակրոնկալելի է: Երկրորդը կը կեդրոնանայ Գերմանիոյ մասնաշաղկապներու մը մէջ խորք աղանդի մը գործունեութեան դէմ որդեգրուած միջոցառումներուն վրայ: Մինչ «Էմմըթի Ինթըր-մէջըմը»-ի մասն կազմակերպութիւններ եւ Եւրոպական Խորհրդարանը կը պահանջեն, որ միայնիկ խորհրդային երկիրներ, որոնց շարքին՝ Հայաստան, հանդուրժողութիւն ցուցաբերեն իրենց ընկերութեան մէջ թափանցող ոչ աւանդական կրօններու եւ աղանդներու մակարդակով պաշտօնական կեցածք մը մոյսիմք մտնելու մէջ:

Մզկիթին մէջ կը հաւաքուին կիրակնօրեայ դպրոցէն ետք: Ծատերը միայն սպաններէն կը խօսին: Ամբողջ նոր աշխարհ մը կը կազմեն անոնք: Նոր գաղթականներ են, նորեկներ՝ մեծ քաղաքին մէջ եւ իսլամներն:

Վերջին մէկ տարուան ընթացքին Հարաւային Քալիֆորնիայի Իսլամական Կեդրոնը նոր իսլամացած սպանախօսներու փափաքին ընդառնալով՝ շարժական հերթականութեամբ կը կայացնէ 90 վայրկեան տեւողութեամբ կրօնական դասընթացներ՝ սպաներէնով: Մարթա Կէյտլըրի, որ իսլամութիւնը ընդունած է Մեքսիքայէն 20 տարի առաջ գաղթելէն ետք, օգնած է այս դասընթացներուն կազմակերպումին: Կէյտլըրի համաձայն, դասընթացքին հետեւողները, որոնք կը տարուբերին 20էն 50 հոգիի միջեւ, մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերեն, սակայն քիչ մը վերապահ են: «Սպանախօսներու յատուկ այս հանդիպումներուն ընթացքին տեւարար կը կրկնենք, թէ մարդիկ պարտաւոր չեն հրաժարի իրենց մշակութիւնէն, որովհետեւ իսլամութիւնը ընդունած են, այլ պէտք է շարունակեն հպարտ գգալ Հարաւային Ամերիկայէն իրենց հետ երբեք որեւէ մշակութիւնով», կ'ըսէ Կէյտլըրի:

Անոնք կու գան ամէն տեղէ: Մեքսիքայէն, Մալիապոլիսէն, Նիքարագուայէն, Փերուէն եւ Քոսթա Ռիքայէն գաղթականներ ամէն շաբաթ կու գան Իսլամական Կեդրոն եւ հանգիստ կը զգան, որ առանձին չեն: Աւելին՝ վերջին տարիներուն Հարաւային Ամերիկայէն գաղթած սպանախօսներու իսլամացած հաւաքականութիւններ կազմուած են Միացեալ Նահանգներու մեծագոյն քաղաքներուն մէջ, Նիւ Եորքէն մինչեւ Լոս Անճելըս: Սպանախօս իսլամներու խմբաւորումներ ստեղծուած են նաեւ սպանախօս հոծ բնակչութեամբ աւելի փոքր քաղաքներու մէջ, ինչպէս՝ Ֆրեզնո (Քալիֆորնիա), Փլայնթէյլըն (Յիւրիսոս) եւ Սոմերվիլ (Նիւ Ճըրսի): Թէեւ դժուար է գիտնալ անոնց ճշգրիտ թիւը, որովհետեւ անոնք պարզապէս մզկիթ կ'աջցնեն եւ կրնան անդամագրուած չլլալ, սակայն Ամերիկայի Իսլամական Խորհրդարանի համաձայն, Միացեալ Նահանգներու տարածքին 25 հազար սպանախօս իսլամներ կան:

Անոնք երկրին իսլամներուն միայն փոքր մէկ կոտորակը կը կազմեն (կ'ենթադրուի, որ Միացեալ Նահանգներու տարածքին իսլամներուն ընդհանուր թիւը կը տարուբերի 4 միլիոնէն 6 միլիոնի միջեւ): Սակայն անոնց թիւը կը բարձրանայ տարուէ տարի: Սպանախօս իսլամներու կազմակերպութիւններու համաձայն, անոնք կը հաշուեն շուրջ 40 հազար, իսկ ամէնէն մեծ թիւը իսլամական սպանախօս համայնքները կը գտնուին Նիւ Եորք քաղաքին, Հարաւային Քալիֆորնիայի եւ Շիքագոյի մէջ, ուր մեծ թիւով իսլամներ եւ սպանախօսներ կը բնակին: Իրօք, սպանախօս գաղթականները երկրին ամէնէն աւելի արագ բազմացող փոքրամասնութիւնը կը կազմեն եւ այնքան արագ թափով կ'իսլամանան, որ 1997ին Նիւ Եորքի մէջ բնակի մը հաւատափոխներու կողմէ հիմնուած Հարաւային Ամերիկեան Տաուազ կազմակերպութիւնը այժմ կը հպարտանայ ամերիկեան 10 նահանգներու մէջ տարածուած իր

բազմահազար անդամներով: Իսլամութիւնը, որ Հարաւային Ամերիկայի մէջ խորհրդաւոր կրօն մըն է, նաեւ այստեղ՝ 11 Սեպտեմբերէն առաջ, ինչպէս կը յաջողի այսքան մեծ թիւով սպանախօս հաւատափոխներ ներգրուել: Քալիֆորնիայի Իսլամական Կեդրոնը այցելող կիներուն մեծամասնութիւնը իսլամ տղամարդու մը միջոցով կը հասնի հոն: Ուրիշներ կ'ըսեն, թէ իսլամութիւնը ընտրած են, որովհետեւ կը նախընտրեն կրօն մը, որ գեղեցիկ է դասակարգային ընտանեկան ծուղակներէն կամ կաթոլիկ եկեղեցւոյ բարդ ուսուցումներէն:

Սպանախօս իսլամ ղեկավարներու համաձայն, սերտ կապերու վրայ հիմնուած սպանախօս իսլամներու մէկտեղումը ինքնին գրաւիչ է, որովհետեւ Հարաւային Ամերիկայէն նոր հասած գաղթականներուն կ'օգնէ, որ ընտելանան ամերիկեան ընկերութեան: Անոնք իրենց հերթին կ'օգնեն, որ իսլամները աւելի չափաւորական դառնան:

Կրօնի մասնագէտներ կ'ըսեն, թէ իսլամութիւնը նաեւ կը ներգրուէ այն անձերը, որոնք կը նախընտրեն պաշտամունքի աւելի ջերմեռանդ ձեւ մը, քան ինչ որ կը գտնեն կաթոլիկ արդի եկեղեցիին մէջ:

Ոմանք գոհ չեն հռոմէական կաթոլիկ եկեղեցւոյ աւանդութեան արդիականացումի ուղղութիւններէն, կը բացատրէ Քալիֆորնիայի համալսարանին կրօնական գիտութիւններու բաժանմունքին պատասխանատուն՝ Ուէյտ Քլարք Ռուֆօ: Հետեւաբար իսլամութեան նման կրօնական աւանդութիւն մը, որ կը փորձէ բաւական խիստ կերպով պահպանել սովորութիւններու եւ հոլովոյթներու շարք մը, գրաւիչ կը թուի:

Նիքար Պոլիվեան, Վերձինիայէն 27 տարեկան երիտասարդուհի մը, որ կը ձգտի ժապաւէնի արտադրիչ դառնալ, եւ որուն մայրը պոլիվիացի է, իսկ հայրը՝ հայ, իսլամութիւնը ընկական անցումը մը կը նկատէ կաթոլիկութենէն:

«Կը սիրէի կրօնը, կ'ըսէ Պոլիվեան, որ իսլամացած է 8 տարի առաջ, Վերձինիայի մէջ եւ այժմ իր հաւատքը կը կիրարկէ Լոս Անճելըսի

մէջ: Ծատ հաւատացեալ էի կաթոլիկներու երկրորդական վարժարանին մէջ: Կ'ուզէի փոխափայլութիւն եւ կրօն ուսանիլ: Կը յիշեմ, որ հարցեր կ'ունենայի դպրոցին մէջ, երբ փոքր տարիքս կը վիճէի որոշ նիւթերու շուրջ, ինչպէս՝ սկզբնական մեղքին: Երբ սկսած իսլամութեան մասին սորվի, ամէն ինչ պարզ էր»:

Պոլիվեան, որ այժմ վաւերագրական ժապաւէն մը կը պատրաստէ սպանախօս իսլամներու վերաբերեալ, հաւատափոխներու երկու տեսակի խմբաւորումներ կը տեսնէ: Մէկը բաղկացած է նոր գաղթականներէ, որոնք աղքատ են եւ սովորաբար՝ տղայ, եւ որոնք զգացական մղումով մը կը դիմեն իսլամութեան, իսկ միւրը բաղկացած է ծագումով սպանախօս գաղթականներու երիտասարդ եւ սովորաբար առաջին սերունդէն, որ ամերիկացի է, կը պատկանի միջին խաւին, քոլեճիկ կրթութիւն ստացած է եւ իր կամքով ու գիտակցութեամբ հաւատափոխ եղած է:

«Բազմաթիւ կիներ հաւատափոխ կը դառնան, որովհետեւ ամուսնացած են իսլամի հետ», կը բացատրէ Պոլիվեան, որ երկու տարի առաջ ամուսնացած է պաղեստինցի իսլամի մը հետ:

Պոլիվեանի նման, Ժոան Կալվըն, Թեքսասի համալսարանէն 26 տարեկան ուսանող մը, գիտակցաբար ընտրած է իսլամութիւնը: Կաթոլիկ խիստ օրէնքներու հետեւող ընտանիքի մը 8 զաւակներէն մէկը՝ ան կը յիշէ, թէ երբեք չէ կրցած ընդունիլ եկեղեցիին կարգ մը ուսուցումները եւ դասակարգային կառոյցը:

«Ծատ թունդ կաթոլիկ էի, կ'ըսէ ան: Կը կիրարկէի բոլոր ուխտերը եւ կը քարոզէի հաղորդութիւն տուող կրօնաւորի մը պէս: Սակայն նոյնիսկ փոքր տարիքէս դժուարութիւն ունէի հասկանալու Աստուծոյ խօսքը եւ սկզբնական մեղքին գաղափարը: Իսլամութիւնը բազմաթիւ հարցեր լուծեց ինծի համար»:

Երբեք տարի առաջ, երբ ան սկսած է լըջօրէն հարցականի տակ առնել կաթոլիկ ուսուցումները, համալսարանին մէջ հանդիպած է քարոզիչի մը: «Հարցուցի անունը եւ չհաւատացի, երբ ըսաւ՝ Ամանտո: Այս սպանախօս

երիտասարդը ինչ կ'ընէր Ալլահին աղօթելով: Կարգ մը բաներ բացատրեց իսլամութեան մասին, ըսաւ, թէ Սպանիա 700 տարի շարունակ իսլամ երկիր մը եղած էր, եւ թէ՛ սպաներէն բազմաթիւ բառեր արաբերէնէ սերած են», կը պատմէ ան:

Այժմ Կալվըն Հարաւային Ամերիկեան Տաուազ կազմակերպութեան Թեքսասի մասնաճիւղին նախագահն է: Ան կ'ըսէ, թէ «ստուախ» արաբերէնով կը նշանակէ կրթութիւն: Կը խոստովանի, թէ երբեմն առանձին կը զգայ իսլամ ըլլալուն պատճառով եւ նախաձեռն կամ համացանցի կայքերու միջոցով կը հաղորդակցի սպանախօս այլ իսլամներու հետ: «Երբեմն կը զգամ, թէ կ'ապրիմ վայրի բնութեան մէջ», կ'ըսէ ան:

Բազմաթիւ սպանախօս իսլամներու համար հաւատափոխութեան ամէնէն դժուար բաժինը ազգականներու հակազդեցութիւնը դիմազրահելն է: Կէյտլըրի 35 տարեկան հիւանդապահուհի մըն է, որ կու գայ ջերմեռանդ կաթոլիկ ընտանիքէ: անոր քոյրերէն մէկը մայրապետ է, եւ ինք դժուարութիւն ունեցած է մօրը համոզելու, թէ պիտի միանայ տարբեր եղանակներով: «Իրեն թելադրեցի քրիստոնեայ կրօնաւորի իսլամութեան մասին, կը պատմէ ան: Այդպէս ալ ըրաւ, եւ կրօնաւորը իրեն ըսած է, թէ իսլամութիւնը լաւ կրօն մըն է: Նոյնը կը թելադրեմ անոնց, որոնք կ'ուզեն իսլամանալ: Հարցուցէք ձեզի ծանօթ քրիստոնեայ կրօնաւորի մը: Անոնք լաւ գիտեն, որովհետեւ բաղադատական կրօնագիտութիւն ուսած են»:

Սպանախօս իսլամներ կ'ըսեն, թէ 11 Սեպտեմբերի դէպքերէն առաջ եւ ետք իրենց բարեկամներուն կողմէ դրուած հարցեր դիմացուած են: Ոմանք հարց տուած են, թէ ինչպէս կարելի է մշակոյթ մը փոխել եւ ընդունիլ այլ աւանդութիւն մը: «Ինծի հարց կու տան, թէ ինչու ընդունած եմ արաբական մշակոյթը», կ'ըսէ Պոլիվեան: Ասիկա պարզապէս իսլամութեան մասին գիտութեան պակաս կ'ապացուցէ»:

Շար.՝ Էջ 8

ԳԵՐՄԱՆԱՅԻՔ ԴԱՒ ՄԸ ԿԸ ՏԵՄՆԵՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՌՈՒ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՄԸ ՄԷՁ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՅԵԼՈՂ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՈՒՄՍ ՄԸ «ՈՒԺ՝ ԱՊՐԵԼՈՒ ԸՄԱՐ» ԲՆԱԲԱՆՈՎ ԶԱՐՈՉՉԱԿԱՆ ԿԱՍԿԱԵԼԻ ԱՐՃԱԻ ՄԸ ՁԵՌՆԱՐԿԱԾ Է ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՁ, ՈՒՐ ԱՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՍԵՑՈՒՄ Է: «ՆԻՒ ԵՈՐԵ ԹԱՅՄԱ» ԿԸ ԳՐԵ.

Միացեալ Նահանգներու նիւթական աշակերտները վայելող ծանուցումի խորհրդաւոր արշաւ մը, որ կը բարոզէ քրիստոնէական արժէքներ եւ «ուժ» ապրելու համար, մեծ աղմուկ բարձրացուցած է այստեղ, այն աստիճան, որ անոր պատկերասփռումն ու ձայնասփռումը արգիւրեցուցաւ, եւ Գերմանիոյ աւանդական եկեղեցիները ստիպուեցան վերատեսուցութեան ենթարկել իրենց գործունէութիւնը:

Գերմանացի կոլֆի մարզիկ Պեննարտ Լանկըր, Պայէրի Միւնիխ Ֆուլթուրի խումբին աստղը՝ Փաուլո Սերճիո եւ ընդմիջ տարիաւոր քրիստոնացի փոփ երգիչ Քլիֆ Ռիչլըտ ցուցատախտակներու վրայ կը ծանուցեն կրօնական արշաւը: Անոնք գերմանացիներուն կը թելադրեն անյապաղ հեռաձայնել թիւի մը՝ ստանալու համար զիրք մը, որ կ'ըսեն, թէ յեղաշրջած է իրենց կեանքը: Սակայն ծանուցումները ոչ մէկ տեղեկութիւն կը փոխանցեն զիրքին հովանաւորներուն ինքնութեան վերաբերեալ:

«Փաուլը ֆոր իլիլիկ» (ուժ՝ ապրելու համար) վերնագիրով հրատարակութիւնը, որ կը ծանուցուի, քրիստոնէական աւետարանական գրութիւն մըն է, որ կը պայքարի ծիւղու, միասնականութեան եւ վիժումի դէմ: Ծուրը 20 տարի առաջ գրուած կրօնական ուղեցոյց մը, որ կը մղէ անձնական փոխակերպութեան, օգտագործելով գանգաւոր սկզբունքներ, ինչպէս՝ «Աստուած կը սիրէ թեք», «Ամերիկայի մէջ մեղաւոր է» եւ «ամէն ոք պէտք է անձնապէս ընդունի Քրիստոսը»: Գիրքը կը բաղաւթի Աստուածաշունչի ընթերցումը: Իսկ ծանուցումի արշաւը կը հովանաւորէ Յիւրիսոսի մէջ հաստատուած Արթըր Ս. Տըմոս հիմնարկը: Արթըր Տըմոս մահացած է 1979ին: Ան իր հարստութիւնը կերտած է կեանքի ապահովագրութեան գործառնութեան մարզին մէջ: Կիրք՝ Նէնսի այժմ կը ղեկավարէ հիմնարկը, որուն ստացուածքներուն արժէքը անցեալ տարի կը հասնէր 563 միլիոն տոյարի: Անիկա նիւթական նպաստ յատկացուցած է «Քեմփըս

Քրուէյսթ ֆոր Քրայսթ» հիմնարկին եւ Յալուէլի Լիպըրթի համալսարանին, նաեւ օգնած է ամերիկացի այլ աւետարանականի մը՝ Փէթ Ռապըրթսընի ծրագիրներուն իրագործումին:

Կ'ըսուի, թէ Տըմոս հիմնարկը շուրջ 4,5 միլիոն տոյար ծախսած է քարոզչական արշաւին համար, որ սկսած Ս. Միւնիքեան օտնէն առաջ: Անիկա մերժած է ընդառաջել արշաւին վերաբերեալ հարցազրոյցի մը առաջարկին:

Գերմանիոյ մէջ կրօնական, քաղաքական կամ գաղափարական հարցերու վերաբերող պատկերասփռումներն ու ձայնասփռումները արգիւրեւծ են: Հետեւաբար իշխանութիւնները Յունուարի սկիզբը արգիւրեցին զիրքին ծանուցումները:

Գերմանական մամուլին մէջ կատարուեցան որոշ ամբաստանութիւններ, որոնց համաձայն, ծանուցումները կը միտին տարածել աղանդի մը սկզբունքները: Բան մը, որ կ'արգիւրէ գերմանական օրէնքը: Որոշ կասկածներ կան, թէ ծանուցումները կապ ունին «սայնսթրոնգի» աղանդին գործունէութեան հետ, զոր գերմանացիք համազօր կը նկատեն նիւթական շահ ապահովելու նպատակով նիւթուած դաւադրութեան մը, եւ որուն նպատակը կրօնական չեն համարեր:

Ծանուցումի արշաւը նուիրատուութեան կողմնակից, ոչ ալ կը բարոզէ հետեւիլ յատուկ եկեղեցիի մը: Անիկա որեւէ ակնարկութիւն չի կատարեր Գերմանիոյ մէջ գործող աւետարանական եկեղեցիներուն:

Պերլինի մէջ կրօնական եւ Գաղափարական Հարցերու Բողոքական Կեդրոնին տնօրէնը՝ Ռայնհարտ Հեմփրլըման կ'ըսէ. «Նոյնիսկ այն մարդիկները, որոնք կը ծանուցան արշաւը, չեն գիտեր Տըմոս հիմնարկին ընդմիջ մանրամասնութիւնները: Անոնք, որոնք Աւետարանը կ'ուզեն քարոզել ժողովուրդին մէջ եւ հրապարակաւ ծանուցել քրիստոնէական հաւատքը, պէտք է քաղութիւնը ունենան յայտնելու իրենց ինքնութիւնը»:

Բողոքական Կեդրոնին պատասխանատուներէն Մաթըլ Ութը ծանուցումը կը վերաբարձ

«չատ պահպանողական ուժերու», որոնք միսիոնարական լայնատարած քարոզութեան ձեռնարկած են Եւրոպայի մէջ, ներառեալ՝ Յրանսայի եւ Սպանիոյ:

Ութըլի համաձայն, քարոզչական արշաւը չափէն աւելի կը կեդրոնանայ անհատին վրայ: «Քրիստոնէական հաւատքին կեդրոնական տարրը՝ հաւաքական գիտակցութիւնը կը պակսի անոր», կ'ըսէ ան:

Ութըլ նաեւ կ'ըսէ, թէ վանողական է արշաւին պատգամը, զոր կ'ամփոփէ հետեւեալ բառերուն մէջ. «Թե՛ իրապէս կը հաւատամ, ապա յաջողութիւն, ուրախութիւն եւ զոհունակութիւն պիտի գտնեմ»: Ան կ'ըսէ, թէ այս սկզբունքը հիմնուած է «էպպէս ամերիկեան կենցաղի վրայ եւ կարելի չէ գայն կիրարկել մեր կեանքին իրականութիւններուն եւ եւրոպական մշակոյթին մէջ»:

Ծանուցումի մարզին մէջ աշխատող նիւ երթքի մը՝ Ֆիլ Տասընպըրի, որ իբրեւ անձնական առանձին գործ պատրաստած է ծանուցումները, կ'ըսէ, թէ Գերմանիոյ մէջ անոնց պատկերասփռումն ու ձայնասփռումը յուսախարութիւն պատճառած է հիմնարկին, որ սակայն չի մտածեր բողոքելու մասին:



«Մեր դժգոհութիւնը այն է, որ գերմանական օրէնքը սխալ է եւ կը բռնաբարէ իսօքի ազատութիւնը, այնպէս՝ ինչպէս գայն կը հասկնանք Ամերիկայի մէջ», կ'ըսէ ան հեռաձայնով: Թերեւս Գերմանիոյ անցեալը նկատի ունենալով հասկնալի է, թէ որոշ սահմանափակումներ պիտի ըլլան այս երկրին մէջ: Սակայն ան կ'աւելցնէ, թէ օրէնքի որեւէ կիրարկումի որոշումէ առաջ հարկ է քննել տուեալ պարագան:

«Ասիկա անվնաս գիրք մըն է, որուն միակ նպատակն է աւետարանը ծանօթացնել», կ'ըսէ Տասընպըրի: Եթե տին նպատակներ չունինք»:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՊԱՏՔԵԹՊՈԼ. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԿՈՓԱՍԱՐՏ

ՍՈՒԹ ԼԵՅՔ ՍԻՔԻ

ԼՈՒԻՍ - ԹԱՅՍԵՆ ՃԱԿԱՏՈՒՄԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՅՈՒՆԻՍԻՆ

Կոփամարտի աշխարհի ախոյեանութեան սպասուած ճակատումը՝ Լենոքս Լուիսի եւ Սայք Թայսընի միջեւ շատ հաւանաբար տեղի ունենայ յառաջիկայ Յունիսին, կը յայտնէ Լուիսի առեւտրական նախագահ Ատրիան Օկիւն:

Սկզբունքով այդ ճակատումը տեղի պիտի ունենար Ապրիլ 6ին, Լաս Վեկասի մէջ, սակայն Նեւատա նահանգը արտօնագիր չտուաւ Թայսընի, որ անցեալ ամիս Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մը ընթացքին կոչուած էր:

«Պի. Պի. Սի.» ռատիոկայանին հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին, Ատրիան ըսաւ, թէ «կոփամարտի համակիրները ամէն գնով կ'ուզեն տեսնել այդ ճակատումը: Կը կարծեն, որ Թայսընը քիչ մը օգնութեան պէտք ունի, այդ սպասուած ճակատումը յաջողցնելու համար»:

Լուիս - Թայսըն ճակատումը, որ ըստ Ատրիանի տեղի կրնայ ունենալ Միացեալ Նահանգներու մէջ, 150 միլիոն տոլարի շահ մը ապահովելով այդ մէկը հիւրընկալող քաղաքին, որոնք այժմ չորս են:

Յ. Ս. Ը. Ս. - ԱՅԻԱՄ ՌԻԱՍԱ՝ 60-58

Լիբանանի դասընթացի փոքր Բ. դասակարգի ախոյեանութեան ֆայնլը ֆորմի իր կապարած առաջին մրցումին, Շաբաթ 16 Փետրուարին, Յ. Ս. Ը. Ս. փոքր ներկայացուցչական կազմը 60-58 արդիւնքով (կիսախաղ՝ 25-25) դարձուցեալ մաքուր իր հիւրը՝ Ահիաս Ռիասան:

Երկրորդ մրցումը փոքր կ'ունենայ այսօր, ժամը 21:00ին, Բաիբաղայի դաշտին վրայ:

ԹԵՆԻՍ

ԷՆՔՎԻՍԹ ՅՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՇԱՀԵՑԱԻ ՄԱՐՍԷՅԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ



Թոմաս Էնքվիսթ

Անցեալ շաբաթավերջին աւարտեցան թենիսի միջազգային չորս մրցաշարքեր, որոնցմէ իւրաքանչիւրը տեղի կ'ունենար տարբեր երկրի մէջ: Մարսէյի մէջ (Ֆրանսա) տեղի ունեցող թենիսի բաց մրցաշարքը վերջ գտաւ շուէտացի թոմաս Էնքվիսթի յաղթանակով, որ աւարտական մրցումին 6-7, 6-3 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնեց ֆրանսացի Նիքոլա Էսքիւրը:

Էնքվիսթ, որ կիսաաւարտականին պարտութեան մատնեց Էսքիւրին, այսօր Էնքվիսթի յաղթանակով կը շահի այս տիտղոսը (նախապէս՝ 1997 եւ 1998):

Կիսաաւարտականին Էսքիւր պարտութեան մատնեց Բրեյկ Ռուստընը: ՏՈՒՅԻ մէջ (Քարթա) տեղի ունեցող թենիսի աղջկանց միջազգային մրցաշարքը վերջ գտաւ թիւ 1 դասուած Մոնիքա Սելէշի յաղթանակով, որ աւարտական մրցումին 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց 4րդ դասուած Թամարին Թասաիկանը (Թայլենդ):

ԱՆՎԵՐՍԻ մէջ (Պելճիք) տեղի ունեցող աղջկանց բաց մրցաշարքին աւարտական ճակատումին աշխարհի թիւ 2րդ դասուած Վիլըն Ուիլիամս, որ մրցաշարքին նախօրեակին անակնկալօրէն փոխարինեց Էրիկ Բրայնը (Վիրալթ), տիրացաւ տիտղոսին, 6-3, 5-7 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց Էսքիւրը: ԲՈՓԵՆՆԱԿԸ մէջ (Դանիա) տեղի ունեցող տղոց մրցաշարքին աւարտականին, գերմանացի Լարս Պուրկամիլը իր առաջին միջազգային մրցաշարքը շահեցաւ, երբ 6-3 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց Օլիվիէ Ռոշիւրը (Պելճիք):

21 տարեկան գերմանացին, 2001 տարւան աւարտին աշխարհի ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւէր 83րդ դիրքը:

ԱՄՍՐԱԼԻԱ ԵՒ ՉԻՆԱՍԱՆ ՇԱՀԵՑԱՆ ԻՐԵՆՅ ԱՌԱՋԻՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԼԸ



Ճէյմի Սէյլ (աջից) եւ Տէյվիտ Փելթօթը



Եանկ Եանկ (աջից) եւ Ուանկ Շիւնլի

Սոլթ Լէյք Սիթիի մէջ տեղի ունեցող 2002ի Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն, շաբաթավերջին Աւստրալիա եւ Չինաստան յաջողեցան շահիլ իրենց առաջին ոսկի մետալները, մինչ չոլանտա իր երկրորդ ոսկի մետալը շահելէ բացի, յաջողեցաւ աշխարհի նոր մրցանիշ մը հաստատել:

Նախքան մանրամասնութիւնները, նշենք, թէ սառնոյցի վրայ տեղի ունեցող սքէյթինկի վոյզի ցուցադրական մրցումներուն ալ Ելենա Պերեմանայա - Անթոն Սիլաբուրիժ Կոյզը (Ռուսիա) իր մօտ կը պահէ ոսկի մետալը:

Շուրջ շաբաթ մը առաջ քանատացի վոյզը Կոյզը գտնուեցաւ Էր ֆրանսացի ժուրիի Մարի-Ռէն Լը Կուրիւրի, որ իր կատարած կողմնակալութեան պատճառով, կախալայուած էր այս Ողիմպիականին: Իր կարգին կախալայուած էր նաեւ միջազգային դահուկարշափի Օթաիօ Սիլբուրա:

Վերադառնալով նախ հանդարտութեամբ անցաւ ժամանակը: Ամերիկացի գետնէն վեր բարձրանալով շահեցաւ արծաթ մետալը, իսկ Կոյզը մետալին տիրացաւ քանատացի Մէթիու թիւրթը:

Աւստրալիա վերջին երկու ձմեռնային Ողիմպիականի մրցումներուն (1994 եւ 1998) շահած էր միայն մէկական արծաթ մետալներ: Իր կարգին Չինաստան շահեցաւ իր առաջին ոսկի մետալը, շնորհիւ՝ Եանկ Եանկի, որ աղջկանց 500 մետր կարճ սփիտսքէյթինկի մրցումներուն, շահեցաւ առաջին դիրքը: Դրոնց մետալին տիրացաւ անոր ազգակիցը Եանկ Պու, իսկ արծաթ մետալին Ժոն Ժիք:

Տղոց վոյզի պոպուլյար մրցումներուն, չայստանը ներկայացնող Տան Ճանկի-Եանկ եւ Ճիւրկու Ալեքսանտրու գրաւեցին 33րդ դիրքը: Առաջին փորձին անոնք արձանագրեցին 49" 53 արդիւնք մը, իսկ երկրորդին՝ 49" 50 արդիւնք մը, (մէկ վայրկեան 39" 03):

Առաջին դիրքը գրաւեց Չուիցերիա, որ արձանագրեց մէկ վայրկեան 35" 05 արդիւնք մը (47" 52 եւ 47" 53):

Ֆինլանտա շահեցաւ իր երրորդ ոսկի մետալը դահուկարշափի խմբային մրցումներուն (5 քմ.): Անոր արձանագրած այս ոսկի մետալին մէջ իր մեծ բաժին ունեցաւ Սամիա Լաժիւնէն, որ քանական օգտակար դարձաւ իր խմբակիցներուն՝ Եարի Մանթիլայի, Եաաքո թալիսի եւ չաննի Մանինէնի:



Ժերար Վան Կելտը

րուն, քանատացիներ Ճէյմի Սէյլ եւ Տէյվիտ Փելթօթի դարձեալ շաբաթավերջին արձանագրուած արծաթ եւ 4 արծաթ մետալներ:



Սթիւըն Պրետպորի

բարձրացան փոփոխուած ստանալու համար իրենց ոսկի մետալը: Միջազգային Ողիմպիականի կոմիտէի նախագահ Ժաք Ռոպը, իր կատարած մամլոյ ասուլիսին ընթացքին յայտարարեց թէ անոնք կը ստանան իրենց ոսկի մետալը, թէ անհետնային ժամանակ Պրետպորիի, որ ամէն

Չինաստան, որ չորրորդ անգամ ըլլալով իր մասնակցութիւնը կը բերէ Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն, առաջին անգամ ըլլալով էր, որ ոսկի մետալի մը կը տիրանայ:

Անկախ ցարդ շահած էր 10 արծաթ եւ 4 արծաթ մետալներ:

Տղոց հապար մետր սփիտսքէյթինկի մրցումներուն, հոլանտացի Ժերար Վան Կելտը, ոչ թէ միայն ոսկի մետալի մը տիրացաւ, այլ յաջողեցաւ աշխարհի նոր մրցանիշ մը հաստատել, արձանագրելով մէկ

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը.

	ՈՍԿԻ	ԱՐԾ.	ՊԸ.
1.- Նորվեկիա	8	5	0
2.- Գերմանիա	5	9	6
3.- Ռուսիա	4	4	2
4.- Մ. Նահանգներ	3	7	6
5.- Իտալիա	3	2	2
6.- Ֆինլանտա	3	1	1
7.- Չուիցերիա	3	0	1
8.- Ֆրանսա	2	3	1
9.- Նոլանտա	2	2	0
10.- Եանկա	2	0	3
11.- Աւստրիա	2	0	0
12.- Աւստրիա	1	3	9
13.- Իրոտաթիա	1	1	0
13.- Չին. Եորթա	1	1	0
15.- Չինաստան	1	0	2
16.- Էսթոնիա	1	0	1
17.- Աւստրալիա	1	0	0
18.- Պուկարիա	0	1	2
20.- Շուէտ	0	1	1
20.- Ծուկոն	0	1	1
20.- Լեհաստան	0	1	1
22.- Չեխիա	0	0	1

ՍՊԱՆԻՈՅ ԳՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ՆԱԿԱՆՋԵՅ ՉՐԴ ԴԻՐՔ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 26րդ հանգրուանի մրցումներուն, Ռէալ Մատրիտ 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Բարսելոնա Պիլ-պոնի դաշտին, կորսնցուց պարագլուխի դիրքը. անկախ օտար դաշտի վրայ իր կատարած երրորդ մրցումն ըլլալով կը պարտուէր: Ա. կիսախաղին, Պիլպոս արդէն իսկ նշանակած էր իր երկու կոլերը, շնորհիւ՝ Թիքոյի (30րդ) եւ Ասիէր Տէլ չոնոնի (45րդ): Ռէալ Մատրիտի կոլը նշանակեց Յեռնանտո Մորիէնթէս (55րդ):

Փարիք Բուրիլիերթի նշանակած կոլին (գլուխով): Նախապէս Լուիս Էնրիքէ (17րդ) եւ Խաիէ Սաիլոյ (74րդ) նշանակած էին դաշտին տերերուն կոլերը, իսկ Տիեկո Թիքոսան (11րդ) եւ Սերժիօ (67րդ)՝ Տեփորթիօ Բոննայի կոլերը:

- Ստորեւ՝ 26րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.
- Ալաւես - Ռէալ Պելթիս 0-1
- Լաս Փալմաս - Ռէալ Վայստոլիտ 1-1
- Օսասունա - Էսփանիոլ 1-1
- Ռայո Վալեքանո - Թեներիֆէ 2-0
- Ռէալ Մարկոսա - Մայորքա 1-0
- Սելիլլա - Ռէալ Սոսիատա 0-1
- Արիլեթիօ Պիլպոս - Ռէալ Մատրիտ 2-1
- Պարսելոնա - Տեփորթիօ Բարոնա 3-2
- Վիարէալ - Վալենսիա 1-1
- Սելթա Վիկո - Մալկա 0-0

Պարսելոնա կարեւոր

